



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 295-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՎՇՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՔԻԱՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 22-Ն որոշման հավելվածի 16-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունը և քաղաքացի՝ Անդրանիկ Մուրադյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը. **որոշում եմ**

Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Աշոցք համայնքի 2023 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, (բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ») Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի բնակիչ Անդրանիկ Սուքիասի Մուրադյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն 35000 /երեսունհինգ հազար/ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 25
գյուղ Աշոցք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ. 0245
2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 296-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Հարություն Պետրոսի Սահակյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, գ. Մեծ Սեպասար, 2 փողոց, տուն 10, անձնագիր՝ AU0249300/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ, պայմանագրով նախատեսված վարձավճար և տեղական տուրք (Հարություն Սահակյան Ա/Ձ) վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրով նախատեսված վարձավճար տալու, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական տուրք վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի, պայմանագրով նախատեսված վարձավճարի և տեղական տուրքի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Հարություն Պետրոսի Սահակյանի սեփականությունը

և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0111-0030/ 1,547 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

2) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0101-0052/ 0,607 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

3) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0106-0037/ 0,6058 հա մակերեսով խոտհարքի համար,

4) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0011-0010/ 1,707 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողի համար,

5) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0106-0026/ 0,393 հա մակերեսով խոտհարքի համար,

6) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0110-0041/ 2,334 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառք՝ 127 868, տույժ՝ 100 354, ենթակա վճարման՝ 225 222 ՀՀ դրամ պարտք:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի հետ Հարություն Պետրոսի Սահակյանի 23/12/2009 և 25/08/2014 կնքած պայմանագրերի տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Հարություն Պետրոսի Սահակյանի վարձակալության պայմանագրի օբյեկտ և քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել պայմանագրով նախատեսված վարձավճար վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-112-001-01-17 / 2,3 հա մակերեսով վարելահողի համար,

2) գ. Մեծ Սեպասար, 0,200 հա մակերեսով արոտի համար

ընդհանուր ապառք՝ 22 645, տույժ՝ 15 089, ընդհանուր՝ 37 734 ՀՀ դրամ պարտք:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի և ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու որոշման՝ տեղական տուրք վճարող օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի տարածքում գտնվող առևտրի կետը (կադաստրային ծածկագիր՝ 0101982) հանդիսանում է քաղաքացի Հարություն Պետրոսի Սահակյանի սեփականությունը («Հարություն Սահակյան» Ա/Ձ /վկայական թիվ 01Ա 135817/), որտեղ 15.12.2022թ. ծխախոտի, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտի հիման վրա ոգելից խմիչք և ծխախոտ է վաճառվել և օրենքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել տեղական տուրք վճարելու պարտականությունները 2022 և 2023 թվականների համար, որի հետևանքով առաջացել է 80 000 ՀՀ դրամի պարտք:

Ընդհանուր առմամբ՝ Հարություն Սահակյանի պարտքը կազմում է 342 956 ՀՀ դրամ:

Հարություն Պետրոսի Սահակյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 16.12.2023թ. թիվ 1 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հարություն Պետրոսի Սահակյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի Հարություն Պետրոսի Սահակյանից հոգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 342 956 (երեք հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:
2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Հարություն Պետրոսի Սահակյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շրջակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 26
գ. Աշոցք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.hamaynq@mail.aru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 297-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով. **որոշում եմ**

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 26
գյուղ Աշոցք



II. ԾՕՀ ՆԵՐՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՈՒՆՁՈՒԹՅՈՒՆԸ

6. «ԾՕՀ» նշանով տեղեկատվություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտախոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:
7. Բաժնույթարարությունում «ԾՕՀ» նշանով տեղեկատվություններին առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է Բաժնույթարարության, անձնակազմի կառուցվածքում և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի անոթ՝ կախված աշխատանքների ծավալից:

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների (այսուհետ՝ <<Ծառայողական օգտագործման համար>>) ներքին գործավարության կազմակերպումն ու իրականացումը:
2. <<Ծառայողական օգտագործման համար>> (այսուհետ՝ <<ԾՕՀ>>) նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է Քատուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետը՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ <<Համակարգ>>) միջոցով:
3. Համակարգում փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է <<ՂԷԱ Գրապալատ>> (GHEA Grapalat) կամ <<ՂԷԱ Մարիամ>> (GHEA Mariam) տառատեսակներով:
4. Համակարգում փաստաթղթերի վավերացումն՝ իրականացվում է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման միջոցով՝ բացառությամբ այն մարմինների, որտեղ ներդրված չէ համակարգը կամ ժամանակավորապես չի գործում:
5. Էլեկտրոնային ստորագրության վավերության դեպքում փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը համարժեք է թղթային տարբերակին: Օգտվողի անունով Համակարգում կատարված ցանկացած մակագրություն (նշագրում, գրառում) համարժեք է փաստաթղթի վրա կատարված մակագրությանը (նշագրմանը, գրառմանը):

II. ԾՕՀ ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ

6. <<ԾՕՀ>> նշումով տեղեկատվություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտահոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:
7. Քատուղարությունում <<ԾՕՀ>> նշումով տեղեկատվություններին առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է Քատուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետը՝ կախված աշխատանքների ծավալից:

8. Յուրաքանչյուր բաժնի պետ իր բաժնից առաջադրում է <<ԾՕՀ>> նշումով տեղեկատվություններին առնչվող պաշտոնների տվյալներ, որը հաստատում է համայնքի ղեկավարը:
9. Համայնքապետարանի ղեկավար կազմից <<ԾՕՀ>> նշումով տեղեկատվություններին առնչվող պաշտոնները որոշում է համայնքի ղեկավարը:
10. Յուրաքանչյուր բաժին <<ԾՕՀ>> նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար պատասխանատու է տվյալ բաժնի պետը:
11. <<ԾՕՀ>> նշումով տեղեկատվություններին առնչվող պաշտոնատար անձանց փոփոխության դեպքում բաժնի պետերը եռօրյա ժամկետում տեղեկացնում են Քատուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին:
12. <<ԾՕՀ>> նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Քատուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, որը պարբերաբար Քատուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

III. <<ԾՕՀ>> ՆՇՈՒՄՈՎ ՄՏԻՑ ԵՎ ԵԼԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

13. Համայնքապետարանում <<ԾՕՀ>> նշումով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գործառնության կարգը հաստատելու մասին>> N 8-Ա որոշումով սահմանված կարգին համապատասխան:
14. Համակարգի <<վերնագիր>> բաժնում, ինչպես նաև <<ԾՕՀ>> նշումով մտից և ելից փաստաթղթերի վերին աջ անկյունում կատարվում է <<ԾՕՀ>> գրառումը:

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ <<ԾՕՀ>> ՆՇՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ

15. <<ԾՕՀ>> նշման անհրաժեշտությունը որոշում է փաստաթուղթը կատարողը և ստորագրում կամ հաստատում իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:
16. Արգելվում է <<ԾՕՀ>> տեղեկության շարտին դասել՝
 - 1) Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև անձանց իրավունքները և ազատությունները, դրանց իրականացման կարգերը սահմանող իրավական ակտերը,

- 2) Իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի քննարկման և դրանց արդյունքներով որոշումների կայացման կարգերը,
- 3) Սահմանված կարգով քննարկված իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի վերաբերյալ կայացած որոշումնորը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- 4) Անձանց իրավունքների, ազատությունների, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահվում են գրադարանների բաց ֆոնդերում կամ կազմակերպությունների բաց տեղեկատվական համակարգերում,
- 5) Բյուջեի կատարման, տնտեսության և բնակչության կարիքների վիճակի մասին տեղեկությունները,
- 6) Մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,
- 7) Տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները,
- 8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները,
- 9) Պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անջանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները:

V. <<ԾՕՀ>> ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Համակարգում ներդրված <<ԾՕՀ>> նշումով ցանկացած փաստաթղթի հասանելիության նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել մինչև հինգ տարի ժամկետով:
18. <<ԾՕՀ>> նշումով տեղեկություններին առնչվող իրավունք ունեցողները ցանկացած ժամանակ Համակարգից կարող են մտից կամ ելից համարներով գտնել միայն իրենց վերաբերյալ փաստաթղթերը:
19. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ <<ԾՕՀ>> նշումով, սակայն իրեն չվերաբերող փաստաթղթերին Համակազգից օգտվողը կարող է ծանոթանալ միայն համայնքի ղեկավարի կամ աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ՝ իրեն կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա:
20. Հինգ տարին լրանալուց հետո <<ԾՕՀ>> նշումով տեղեկության հասանելիության նկատմամբ սահմանափակումները հանվում են:

21. Համակարգում պահպանված՝ արխիվացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում ստեղծված կենտրոնական արխիվ:
22. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանում ստեղծված կենտրոնական արխիվում փաստաթղթերը պահպանվում են 10 տարի ժամկետով:

VI. <<ԾՕՀ>> ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

23. <<ԾՕՀ>> նշումով տեղեկությունը չի կարող հրապարակվել (տարածվել) առանց այդ տեղեկությունը պարունակող փաստաթուղթն ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվության:
24. <<ԾՕՀ>> նշումով տեղեկության հրապարակումը տեղեկությունների հրապարակումն է այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահվել են ըստ ծառայության, աշխատանքի կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով, ինչի հետևանքով դրանք հայտնի են դարձել այլ անձանց:
25. <<ԾՕՀ>> նշումով տեղեկություններ պարունակող փաստաթղթերի կորուստը փաստաթղթերի վերահսկման կորուստն է (այդ թվում՝ ժամանակավորապես) պատասխանատու անձի տիրապետությունից, որին դրանք վստահվել էին ըստ ծառայության կամ աշխատանքի, և հետևանք է դրանց հետ վարվեցողության ընթացքում սահմանված կարգի խախտման, որի պատճառով այդ փաստաթղթերին դարձել են կամ կարող են իրազեկ դառնալ կողմնակի անձանց:
26. <<ԾՕՀ>> նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրանք հայտնաբերող պաշտոնատար անձը դրա մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին և համայնքի ղեկավարին:
27. <<ԾՕՀ>> նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են նշանակվել ծառայողական քննություն:
28. <<ԾՕՀ>> նշումով տեղեկություն հրապարակած անձանց նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ. 0245
2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 298-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Միսակ Հրաչի Մելիքյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, գ. Մեծ Սեպասար, 4 փողոց, բնակարան 17, անձնագիր՝ AP0586204/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու, պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Միսակ Հրաչի Մելիքյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0010-0008-002-001/ բնակարանի համար,

2) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0014-0010/ 0,089 հա բնակելի կառուցապատման հողի համար,

3) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0101-0019/ 0,443 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

4) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0106-0050/ 0,5 հա մակերեսով խոտհարքի համար,

5) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0103-0011/ 0,19 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

6) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0102-0012/ 1,477 հա մակերեսով անջրդի վարելահողի համար,

7) գ. Մեծ Սեպասար, /կադաստրային ծածկագիր՝ 08-081-0106-0078/ 1,898 հա մակերեսով խոտհարքի համար,

ընդհանուր մինչև 2020 թվականը տույժ՝ 25 584, 2021-2023 թվականներին՝ ապառք՝ 64 119, տույժ՝ 9680 ՀՀ դրամ, ենթակա վճարման՝ 99 383 ՀՀ դրամ պարտք:

Միսակ Հրաչի Մելիքյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 16.12.2023թ. թիվ 2 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Միսակ Հրաչի Մելիքյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լուծ անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծ չի անցկացվել:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի Միսակ Հրաչի Մելիքյանից հոգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 99 383 (իննսունինը հազար երեք հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Միսակ Հրաչի Մելիքյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 26
գ. Աշոցք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ. 0245
2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 299-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արշալույս Սիմոնի Թովմասյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի, Տրդատ Ճարտարապետի փողոց, 6 Ա շենք, բնակարան 7, անձնագիր՝ AS0455770/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու, պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սիզավետ բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Արշալույս Սիմոնի Թովմասյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0106-0040/ 0,89 հա անջրդի վարելահողի համար,

2) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0032-0037/ 0,06 հա բնակելի կառուցապատման հողի համար,

- 3) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0108-0059/ 2,88 հա անջրդի վարելահողի համար,
- 4) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0112-0029/ 2,98 հա անջրդի վարելահողի համար
- 5) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0032-0025/ 0,7014 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 6) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0032-0046/ 0,15 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 7) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0112-0072/ 4,85 հա անջրդի վարելահողի համար
- 8) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0116-0002/ 3,92 հա խոտհարքի համար,
- 9) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0010-0021/ 0,236 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 10) գ. Սիզավետ, /կադաստրային ծածկագիր՝ 08-106-0108-0096/ 1,49 հա անջրդի վարելահողի համար

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառք՝ 404 269 ՀՀ դրամ, տույժ՝ 263 926 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 668 195 ՀՀ դրամ, 2021-2023 թվականներին՝ ապառք՝ 93 168 ՀՀ դրամ, տույժ՝ 14 344 ՀՀ դրամ, ենթակա վճարման՝ 107 512 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 775 707 ՀՀ դրամ պարտք:

Արշալույս Սիմոնի Թովմասյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 15.12.2023թ. թիվ 3 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արշալույս Սիմոնի Թովմասյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման անցկացվել:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր

բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի Արշալույս Սիմոնի Թովմասյանից հօգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 775 707 (յոթ հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր յոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Արշալույս Սիմոնի Թովմասյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շրջակա մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 26

գ. Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2023 թվականի N 300 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՍՈՒՆ ՎԱՌԱՄԻ
ԱՅՎԱԶՅԱՆԻՆ, ՄԵՏԱՔՍՅԱ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ, ԻԼԻԶ ՍԱՍՈՒՆԻ
ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԵՎ ԻՐԻՆԱ ՍԱՍՈՒՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-040-0006-0006-1 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Սասուն Վառլամի Այվազյանի լիազորված անձ Լյուկա Սիմոնյանի դիմումը, **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Զույգաղբյուր գյուղում գտնվող քաղաքացիներ Սասուն Վառլամի Այվազյանին, Մետաքսյա Ալեքսանի Այվազյանին, Իլիչ Սասունի Այվազյանին և Իրինա Սասունի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Զույգաղբյուր, 8-րդ փողոց, բնակելի տուն 12, հասցեում գտնվող, 08-040-0006-0006-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2023 թվականի նոյեմբերի 15-ին, վկայական N 15112023-08-0006/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Զույգաղբյուր, 8-րդ փողոց, բնակելի տուն 12:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 27
գյուղ Աշոցք

